**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

N 073-92

0231-6-09-36

01 հունիսի 2012թ.

գ.Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի մայիս ամսվա արձակած կարգադրությունները և ընդունած որոշումները:

Առդիր՝ 4 թերթ:

Համայնքի ղեկավար Զ. Գրիգորյան

4984-12
01 06 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

10 մայիսի 2012թ. Թիվ 11

# ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի 12 փողոցի թիվ 8 հասցեում գտնվող Պեպո Ելիզբարի Կոստանյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա գտնվող 86.9 քմ մակերեսով շինության նկատմամբ սեփականության իրավունքը, որը կառուցվել է 1996 թվականին:

2.Շինության մակերեսը ենթակա են ճշտման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

4.Առաջարկել Հայաստանի Հանրապետությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանմանը գրանցել Պեպո Ելիզբարի Կոստանյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված շինության նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Զ. Գրիգորյան

2012 թվականի մայիսի 10
գ. Արշալույս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

10 մայիսի 2012թ. Թիվ 12

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32 րդ հոդվածի 17 րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387 Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքում գտնվող «Մուշ-1» ՍՊԸ-ին պատկանող շինությանը (ծածկագիր 04-021-355-067) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի Լճափնյա փողոցի թիվ 14 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Գ. Գրիգորյան

2012 թվականի մայիսի 10
գ. Արշալույս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

21 մայիսի 2012թ. Թիվ 13

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1328-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի բնակիչ Պեպո Կոստանյանի դիմումը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի 12 փողոցի 8 հասցեում գտնվող 1996 թվականին կառուցված 86.9 քառակուսի մետր անասնաշենքը, դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը՝ 1000 քառակուսի մետր, համայնքի բնակիչ Պեպո Ելիզարի Կոստանյանի /ծնված 30.04.1961թ./, որպես սեփական գույքի տիրապետողի, սեփականություն:

2. Սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Զ. Գրիգորյան

2012 թվականի մայիսի 21
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

02 մայիսի 2012թ.

Թիվ 7

## ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32 րդ հոդվածի առաջին մասի 17 րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային փրկարարական վարչության 2012 թվականի հիմնական միջոցառումների պլանի 12.2.2 կետը՝ 2012 թվականի մայիսի 10 ին անցկացվելիք <<ՀԱԷԿ – ի ընդհանուր վթարի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների ղեկավարումը >> թեմայով շտաբային ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման մասին.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2012 թվականի մայիսի 10-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի համայնքապետարանում անցկացնել շտաբային ուսումնավարժություն <<ՀԱԷԿ-ի ընդհանուր վթարի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների ղեկավարումը>> թեմայով /ղեկավար՝ Ջ. Գրիգորյան/:

2. Շտաբային ուսումնավարժությանը ներգրավել համայնքի ՔՊ ղեկավար կազմին, համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովին և ՔՊ համայնքային կազմավորումների հրամանատարներին:

3. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ նշանակել համայնքի ղեկավարի տեղակալ Գագիկ Շահգալդյանին:

4. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալին՝ մինչև մայիսի 2-ը մշակել և համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և մինչև մայիսի 10-ը զեկուցել ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին:

5.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Գ. Շահգալդյան

ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ 04708405

2012 թվականի մայիսի 2
գ. Արշալույս